ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19 Հեռ./ֆաքս՝ + 374 11 513608

«12» ապրիլի 2019
Պետական եկամուտների կոմիտեի
նախագահ Դավիթ Անանյանին

Հարգելի՛ պարոն Անանյան,

Հիմք ընդունելով «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը՝ խնդրում եմ Ձեզ տրամադրել տեղեկատվություն 2018 թվականի հունիսից մինչ այսօր Հայաստանի Հանրապետություն քարսիթներ(ավտոմեքենայի մանկական նստատեղ) ներմուծող ընկերությունների վերաբերյալ: Խնդրում եմ նաև նշեք, թե յուրաքանչյուր կազմակերպության կողմից ի՞նչ քանակի քարսիթ(ավտոմեքենայի մանկական նստատեղ) է ներմուծվել ՀՀ:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

«Լուսավոր Հայաստան» խմբակցության
պատգամավոր Արմեն Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«19» 04 2019թ.
No 33/5111-19

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 12.04.2019թ թիվ N 1747-19 գրության

Հարգելի պարոն Եղիազարյան

Հայտնում ենք Ձեզ, որ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 356-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մաքսային մարմինները, դրանց պաշտոնատար անձինք, ինչպես նաեւ սույն Օրենսգրքին, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերին եւ ակտերին, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին եւ (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկատվությանը ծանոթանալու իրավունք ստացած անձինք իրավունք չունեն հրապարակելու, անձնական նպատակներով օգտագործելու կամ այլ անձանց, այդ թվում՝ անդամ պետությունների պետական մարմիններին փոխանցելու պետական, առեւտրային, հարկային, բանկային եւ անդամ պետությունների օրենսդրությամբ պահպանվող այլ գաղտնիք (գաղտնիքներ) պարունակող տեղեկատվությունը, ինչպես նաեւ այլ գաղտնի տեղեկատվություն՝ բացառությամբ սույն Օրենսգրքով, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով եւ (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

<<Մաքսային կարգավորման մասին>> ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական, բանկային, ապահովագրական, առևտրական, ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները մաքսային մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք չեն կարող հրապարակել, օգտագործել անձնական նպատակների համար տրամադրել երրորդ անձանց, այդ թվում՝ պետական մարմինների, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Միաժամանակ, <<ՀՀ ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին>> ՀՀ օրենքով, ինչպես նաև Ազգային ժողովի կանոնակարգ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

սահմանադրական օրենքով նախատեսված չեն նորմեր, որոնք ուղղակիորեն իրավունք են վերապահում ՀՀ ազգային ժողովի պատգամավորներին՝ պահանջելու վերոնշյալ իրավական ակտերով նախատեսված գաղտնիք պարունակող տեղեկատվություն:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ Ձեր 12.04.2019թ-ի թիվ N 1747-19 գրությամբ (ըստ կազմակերպությունների) պահանջվող տվյալները ենթակա չեն տրամադրման, քանի որ պարունակում են գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն:

Միաժամանակ կից Ձեզ ենք ներկայացնում մաքսային վիճակագրական տվյալների շտեմարանում առկա հրապարակման ենթակա տեղեկատվությունը՝ 01.06.2018-17.04.2019թթ. ընթացքում ԱՏԳ ԱԱ 9401710001, 9401790001, 9401800001 ծածկագրերին դասվող ապրանքներ (մանկական անվտանգության նստատեղ) ՀՀ ներմուծող կազմակերպությունների ցանկը և վերոնշյալ ժամանակահատվածում ներմուծված ընդհանուր քանակը՝ չնշելով յուրաքանչյուր կազմակերպության կողմից ներմուծված քանակները:

Առդիր մեկ ֆայլ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Մ/Ծ ԳՆԴԱՊԵՏ

X _____

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Մաքսային վիճակագրության
և տեղեկատվության բաժին
Արթուր Մկրտումյան
Հեռ. 060 544337

ՑԱՆԿ

01.06.2018-17.04.2019թթ. ընթացքում ԱՏԳ ԱԱ 9401710001, 9401790001, 9401800001 ծածկագրերին դասվող ապրանքներ ՀՀ ներմուծած կազմակերպությունների

Կազմակերպություն
«Արջիէէմ ոիթեյլ գրուպ Արմենիա» ՓԲԸ
<ՄԻՄԱՆԻԿ> ՍՊԸ
<Արիանա 17> ՍՊԸ
«Գեւորգ Չաթալյան» ՍՊԸ
«Նարեկացի Հիբոկրատ» ՍՊԸ
«Թրասթ ընդ փարթներշիփ» ՍՊԸ
«Մաթա» ՍՊԸ
«Լուսարմ» ՍՊԸ
«Սան Լազզարո» ՍՊԸ
«Տաստ Սայքլս» ՍՊԸ
<Մխիթար Կարապետյան> ԱՁ
«Արման Գրիգորյան» ԱՁ
«Վիրաբ Եղիազարյան» ԱՁ
<Գուրգեն Ստեփանյան> ԱՁ
«Կարեն Ստեփանյան» ԱՁ
«Աննա Երիցյան» ԱՁ
«Գագիկ Մուրադյան» ԱՁ
«Հովհաննես Մաթևոսյան» ԱՁ

Վերոնշյալ ժամանակահատվածում ՀՀ է ներմուծվել **3479** հատ մանկական անվտանգության նստատեղեր

o

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

«26» ապրիլի 2019թ.

ՀՀ վարչապետ
Նիկոլ Փաշինյանին

Հարգելի՛ պարոն Փաշինյան,

Հայտնում եմ, որ ընթացիկ տարվա ապրիլի 12-ին հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, դիմել եմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն ՀՀ քարսիթներ (ավտոմեքենայի մանկական նստատեղ) ներմուծող ընկերությունների վերաբերյալ: Խնդրել եմ նաև նշել, թե յուրաքանչյուր կազմակերպության կողմից ինչ քանակությամբ քարսիթ է ներմուծվել:

Պատասխան գրության մեջ ինձ հայտնում են, որ ՀՀ «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով նախատեսված չեն նորմեր, որոնք ուղղակիորեն իրավունք են վերապահում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորին՝ պահանջելու գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն:

Հարկ եմ համարում նշել, որ խնդրի առնչությամբ քննարկում եմ ունեցել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի Առաջին բաժնի հետ: Առաջին բաժնից հայտնել են, որ այդ տեղեկատվության տրամադրումը չի խախտում գաղտնիության ռեժիմը:

Հաշվի առնելով Ձեր երաշիքները խորհրդարանական վերահսկաողության վերաբերյալ՝ խնդրում եմ Ձեր միջամտությունը, որպեսզի կառավարության անմիջական ենթակայության տակ գնվող կառույցը՝ ՀՀ պետական եկամուտների

ք. Երևան, Մ. Բաղրամյան պող.19, սեն.130, հեռ. 011 513-608 armen.yeghiazaryan@parliament.am

կոմիտեն չչարաշահի իր լիազորությունները և անհիմն չխոչնդոտի ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի աշխատանքային գործունեությանը:

Առդիր 3 էջ:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

«Լուսավոր Հայաստան»
խմբակցության պատգամավոր
Արմեն Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594-004
Էլ. փոստ info@moj.am

_____N _____

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2019 թվականի մայիսի 16-ի թիվ 02/05.4/22346-2019 հանձնարարականի՝ կից ներկայացվում է «Լուսավոր Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Եղիազարյանի հարցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության պատասխանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

X _____
Artak Zeynalyan

Կատարող՝ Արմենուհի Չիֆլիկյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-122

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՊԱՐՈՆ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան

Ի պատասխան ՀՀ վարչապետին ուղղված Ձեր՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու վերաբերյալ գրության, հայտնում ենք, որ Ձեր կողմից կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացվել էր գրություն՝ հայցելով տեղեկատվություն ՀՀ քարսիթներ ներմուծող ընկերությունների վերաբերյալ՝ խնդրելով նշել նաև, թե յուրաքանչյուր կազմակերպության կողմից ինչ քանակությամբ քարսիթ է ներմուծվել:

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում վկայակոչել ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 63-րդ կետը, որի համաձայն հարկային գաղտնիք է հանդիսանում հարկ վճարողի, հարկ վճարողի գործունեության վերաբերյալ հարկային մարմնի կամ հարկային ծառայողի ստացած ցանկացած տեղեկություն, բացառությամբ՝

ա. հարկ վճարողի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների,

բ. հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկության,

գ. հարկ վճարողի կանոնադրության մեջ ներառվող տեղեկությունների,

դ. հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկությունների,

ե. հարկ վճարողի կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ միջազգային կամ միջգերատեսչական պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա այլ պետությունների

հարկային կամ մաքսային մարմիններին ներկայացվող տեղեկությունների՝ այդ մարմիններին ներկայացնելու դեպքերում:

Ելնելով տվյալ իրավադրույթից՝ կարելի է եզրակացնել, որ ցանկացած տեղեկություն, որը ներառված չէ վերոհիշյալ հոդվածով նախատեսված բացառությունների շարքը, հանդիսանում է հրապարակման կամ փոխանցման ոչ ենթակա տեղեկություն:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն հարկային մարմինը պարտավոր է պահպանել հարկային գաղտնիքը, հարկային գաղտնիք համարվող տեղեկատվությունը օրենքով սահմանված դեպքերում օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին:

Հետևաբար կոնկրետ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող տվյալ ապրանքի կոնկրետ քանակի մասին տեղեկատվությունը հանդիսանում է հարկային գաղտնիք: